



ԵՐԱՊԵՏԱԲԹԻ, 11 ՅՈՒՆԻՍ, 2016

## ՏԵՐՈՒՄԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս զիս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՐՄՈՍ 149

ԱՍՏՈՒԱԾԱՇԱՇՏ ՄԱՐԴՈՑ ՓԱՌՔԸ

Նոր երգ երգեցէ՛ք Տիրոջ:

Աստուծոյ ժողովուրդը իր Արարիչով թող ուրախանայ,

Սիոնի որդիները իրենց Թագաւորով թող ցնծան:

Երգ ու պարով թող օրհներգեն անոր անունը,

Որովհետեւ Տէրը կը սիրէ իր ժողովուրդը,

եւ փրկելով կը փառաւորէ խոնարհները:

Ուստի Տիրոջ հաւատարիմ մարդիկը

թող պարծենան իրենց փառքով,

թող ցնծան իրենց հանգիստին մէջ:

## ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:*

*Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:*

*Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:*

*Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէրոց:*

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

## ԱՊՈԹՔ

*Պահապան ամենայնի Զրիստոս,*

*աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի Կուր եւ ի գիշերի,*

*ի նստիլ ի փան, ի զնալ ի ճանապարհ,*

*ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.*

*եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒԲԱՆ ՆԻԻԹԸ



ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՄ ՈՒՂՂՈՒԲԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 3:10-23 եւ 4:1-13)



## ՔՐԻՍՏՈՍԻ ՍՊԱՍԱԲՈՐՆԵՐՆ ԵՆՔ (4:1-13)

Պօղոս Առաքեալ, 3րդ գլխուն մէջ հետեւեալները կը յիշեցնէ, թէ.

1. «**Դուք Աստուծոյ փաճարն էք, եւ Աստուծոյ Հոգին կը բնակի ձեր մէջ: Հետեւաբար եթէ մէկը Աստուծոյ փաճարը քանդէ՝ Աստուած ալ զինք կորուստի պիտի մատնէ, որովհետեւ Աստուծոյ փաճարը սուրբ է. եւ դուք էք այդ փաճարը**» (16-17 հմր):

2. «**Ձեզմէ ով որ այս աշխարհին չափանիշով ինքզնիք իմաստուն կը կարծէ, թող յիմար ըլլայ՝ որպէսզի իրաւ իմաստուն ըլլայ: Որովհետեւ այս աշխարհի իմաստութիւնը Աստուծոյ աքջին յիմարութիւն է**» (18-20 հմր):

3. «**Թող ռեւէ մէկը չպարծենայ մարդոցմով, որովհետեւ ամէն ինչ ձեզի համար է: Իսկ դուք Քրիստոսի կը պարկանիք, եւ Քրիստոս ալ՝ Աստուծոյ**» (21-23 հմր):

Կը շարունակէ եւ անգամ մը եւս մէկ այլ կերպով կը բացատրէ առաքեալի կոչումն ու պաշտօնը ըսելով. «**Քրիստոսի սպասաւորներն ենք, որոնց յանձնուած է Աստուծոյ ծածուկ ծրագրին վերակազմութիւնը**»: Սպասաւորներ, որոնցմէ կը պահանջուի հաւաքարմութիւն:

Պօղոս Առաքեալ այս բացատրութեամբ նկարի ունի ոչ թէ միայն ինքզնիք, այլ բոլոր ժամանակներու քարոզիչները, որոնք ուրիշ բան չեն եթէ ոչ Քրիստոսի սպասաւորները, այլ խօսքով՝ ծառաներ, եւ ոչ թէ ինչպէս որ Կորնթացիները կը նկարէին՝ որպէս փերեր: Ուրեմն իրենք փերերն են, Աստուծոյ փան մէջ վերակազմուներ, որոնց յանձնուած է Աստուծոյ ծածուկ ծրագրներուն մարտնչութիւնը: Եւ այդ մէկը ընենք ամենայն հաւաքարմութեամբ: Քրիստոսի խօսքերն են. «Բարի, ազնիւ ու հաւաքարիմ ծառայ», հաւաքարիմ ըլլալու Աստուծոյ կամքին հնազանդութեան: Աստուծոյ ծածուկ ծրագրները ուրիշ բան չեն եթէ ոչ Աստուծոյ փրկութեան ծրագիրը, որ ժամանակներու լրումին յայտնուեցաւ Քրիստոսով, ինչ որ որոշ ժամանակ մը ծածուկ մնացած էր:

Միտքը շարունակելով, եւ ըստ երեւոյթին հարցին կնճրոյ բաժինը կը ներկայացնէ, որ կարծէք նաեւ պարճառ եղած էր Կորնթոսի եկեղեցոյ ներքին պառակտումներուն: «**Ինձի համար բնաւ նշանակութիւն չունի թէ դուք ինչպէս կը դաքքէ զիս, կամ մարդիկ ինչպէս կը դաքեն: Ես ինքզնիքս ալ չեմ դաքեր: Որովհետեւ Տէրն է որ պիտի դաքէ**» (3-4 հմր): Ինչո՞ւ արդեօք: Աստուծոյ գործը կարարող մարդուն համար, որովհետեւ դաքողը Աստուած ինք պիտի ըլլայ: Նշանակութիւն չունի, թէ մարդիկ մէկուն գործը աւելի կը գնահատեն քան միւսինը: Մարդոց դաքաստանը երբեք ալ ուղեցոյց չի կրնար ըլլալ: Աստուծոյ պաշտօնեային ուղեցոյցը Աստուած ինքն է, իսկ իր գործին գնահատանքը Աստուած ինք պիտի փայ դաքաստանի օրը: Արիկա չի նշանակեր անպայման թէ ինք շիտակ է կամ արդար: Կրնայ նաեւ սխալիլ ու թերանալ: «**Ուստի ժամանակէն առաջ մի դաքէք, որովհետեւ իրաքանջիւրը Աստուծմէ պիտի ստանայ արժանի գովասանքը**» (5 հմր): Ուրեմն այսպէղ ունինք երեք դաքաստաններ. այլոց, անձնական եւ Աստուծոյ: Այլոց կարեւոր չէ, որովհետեւ եղելութիւնը ամբողջութեամբ ծանօթ չէ ուրիշին, փակաւին, ուրիշներուն դաքաստանները համեմուած կ'ըլլան ինչ-ինչ նկատումներով: Անձնական կամ իղճի դաքաստանը կարեւոր է, բայց ոչ վճռական եւ վերջնական, մանաւանդ յաճախ մեր դաքաստանները հակամէտ են ի նպաստ մեզի: Իսկ երրորդ դաքաստանը, որ ամենակարեւորն է, որովհետեւ Աստուած Ինք գիտէ ու կը քննէ մեր սրտերն ու խորհուրդները, ու մանաւանդ անաջառ է:

Պօղոս ինքզնիք եւ Ապողոսը իբրեւ օրինակ կ'օգտագործէ, սակայն իր մտքին մէջ ուրիշ անձերու մասին է խօսքը: Ըսելիքը այն է, թէ ռեւէ մէկով պէտք չէ պարծենալ, որովհետեւ բոլորն ալ Աստուծոյ պաշտօնեաներն են եւ Անոր խօսքին քարոզիչները: «**Գրուածէն անդին ոչինչ**»: Այս խօսքը ուրկէ յարակ չէ, բայց կարելի է անոր մէջ տեսնել հետեւեալը, թէ կարեւորը քարոզիչը չէ այնքան որքան Աստուծոյ խօսքը, ու այդ խօսքին քարոզութիւնը: Յանկարծ չըլլայ թէ այսինչ քարոզիչը աւելի գնահատուի քան միւսը, մոռնալ խօսքին կարեւորութիւնը:

Տակաւին, Կորնթացիները աւելի կարեւորութիւն կու տային իրենց ունեցած պարգեւներուն ու կարողութիւններուն, որպէս պարճանքի առարկայ: Մինչ Պօղոս կը յիշեցնէ, թէ ի վերջոյ ամէն ինչ Աստուծոյ կը պարտին: Յետոյ անմիջապէս կը հեզնէ Կորնթացիներուն անմիտ հպարտութիւնը, որովհետեւ քանի մը շնորհներ ունենալով կը կարծեն թէ արդէն հասած են կարարելութեան:

Միւս կողմէ, թագաւորութեան հասած ըլլալու հանգամանքը միայն յարուկ չէ կորնթացիներուն, այլ՝ բոլորին: Այնքան ապեն, որ թէ առաքեալները փակաւին մարդոց մէջ յերինն են մահապարտներու պէս, փակաւին ենթակայ են փաժանքի ու անարգանքի, ուրեմն անիմաստ է Կորնթացիներուն բռնած դիրքը որպէս արքայութեան հասածներ: Հոն հասնելու համար, սակայն, արժանանալու Քրիստոսի օրհնութիւններուն, որոնց կ'արժանանան հոգիով աղքատները, հեզերը, սրտով մաքուրները, եւ բոլոր անոնք որոնք յանձն կ'առնեն ճիգն ու զոհողութիւնը: Կարծէք Կորնթացիները այնպէս կը սեպեն որ իրենք արդէն իսկ հասած են այդ թագաւորութեան առանց այդ ճիգին ու զոհողութեան: Եւ ահա համեմատութիւններ կ'ընեն կորնթացիներուն հետ միասին, ընդգծելով անոնց սնապարծութիւնը: Տակաւին, ան ցոյց կու փայ իր իսկական ապրելակերպը, անօթի, ծարաւ, միսամերկ, ծեծի ենթարկուած, մնայուն կայք չունեցող, իսկ հացն ալ սեփական աշխատանքով ձեռք բերուած, Քրիստոսի օրինակով: Այս բոլորի դիմաց, փակաւին, ան բարիով կը փոխադարձէ: Պօղոս Առաքեալ իբրեւ հայր կ'ուզէ դաստիարակել Կորնթացիները եւ զիրենք հեռու պահել ամէն փեսակի հպարտութենէ ու սնափառութենէ, որու պարճառով պառակտումներ փետի ունեցած էին, եւ անով Աստուծոյ փաճառը պղծած: